38. ԱՐԴԱՐԱԴԱՏ ԴԱՏԱՎՈՐ

Մեկ մարդմ Ռուսաստանա գնաց Ստամբոլ, չորս, վեց տարի աշխատեցավ, վաստըկեցավ էրկու խարիր մաճիթիյա, էլավ, ճամբախ տվեց հառեջ պտի էրթեր, փոդնի մեջ մարդմ տեսավ, ասաց. - Ի՞նչ մարդ ես, դո՞ր կէրթաս:

Ասաց. - Կէրթամ Ռուսաստան:

Ասաց. - Փարա, բան վաստըկե՞ր ես:

Ասաց. - Խա, Աստված չորս խարիր մաճիթիյա տվեց:

էդ մարդուն բռնեցին, տարան հուքմաթ:

Հուքմաթ փարեն առավ էդոր մոտեն, ասին. - Մեր թագավորին սիքան իրավունք չկա, տանիս ռուսի մեջ:

էտա մարդն էր, տեր-տիրական չկա. վիզ ծուռ մըջ փոդներուն, անոթի, ծարավ պտոտեց:

Ավուր մեկ մըջ փոդնին կանուկ էր, վարժատան ճժեր վարժատնեն հէլան, կէրթեն խաց ուտելու: էդ մեկ տղեն իշկեց էդ մարդուն վիզ ծուռ կանուկ ա:

Հարցուց. - Աղբե՛ր, քըզնե բան կը խարցում, չըս ըռըքի:

- Չէ՛, չըմ ըռըքի:

Ասաց. - Ես կիշիմ քու դարտ շատ ա:

- Ճանըմ, - ասաց, - դու էրեխա ես, գնա՛, բանիդ:

- Չէ՛, դու ասա՛, - ասաց:

էլավ էդ մարդ իր գլխու գալած ասաց:

Դորիս տղեն ասաց. - Կէրթաս էմել քու փարեն կուզես, որ չտվեցին, կասես. «Ես ծեր թագավորութենի մեջ վեց տարի բանա, դուք մկա էկեք Աստըծու հառեջ վեքիլութեն էնեք, որ Աստված ընծի վեց տարի լե ումր տա իմ օլուխ-չուճուխին իտարան էնեմ»:

Գնաց հուքմաթ, ասաց. էդ հուքմաթ չի կարցան պատասխան տեն:

Խապար տվեցին թագավորին. - Էս մարդ էսլա կասա:

Թագավոր կասա. - Էդ մարդու փարեն տվեք, ըդոր սովրցնողը առեք, էկեք մը ծի:

Ջոռ կը դնեն վըր էդ մարդուն. - Էս խելք քզի ո՞վ սովրցուց:

Կասա. - Ֆըլան վարժատան ճժերուց մեկը:

Կօրողկա թագավոր էն ճիժ կը գնտնի, բերա ուր մոտ:

Տղեն գլուխ տվեց, փաթա բռնեց, կայնավ:

- Այ տղա, - ասաց թագավոր, - իմ յաշ գնաց, էդա խոսք իսկի լսած չէղեր ի, ես պտի դնեմ քե դատավոր:

Ասաց. - Թագավո՛ր ապրած, դատավորութեն կէնեմ, ամա իմ աչքեր սաղ ա, որ խանես, կէնեմ, չէ՛, չեմ էներ:

- Հորի՞ն քու աչքեր խանեմ, - ասաց:

- Որ կուզես արդար շարիաթ անեմ, իմ աչքեր խան:

Ասաց. - Ջէդոր մանեն ի՞նչ ա:

- Որ իմ աչքեր սաղ էղնի, մեկ իմ աղբերն ա, մեկ ազգն ա, մեկ ջեհել ա, մեկ խորոտ ա, մեկ նշանով ա, իմ աչք կը տեսի, միտք ա՝ կը փոխվի. իմ աչք օր խանես, հըմեն մեկ դռնով կը մտուցեմ, մեկ դռնով կը խանեմ:

Միլ բերեց, աչքեր խանեց, դրեց դատավոր հախ դոշակին:

Մեկ տաս, քսան տարի էնպես հախ շարիաթ էնեց. էդ դատավորի ծեն պիթուն աշխար ցվըրվավ:

Աստվածութեն Գաբրել խրիշտակին խրկեց, ասաց. - Գնա, էդ ղազու շարիաթ իմացիր, աղե՞կ ա, չեն՝ քուն:

Աստըծու խրամանքով էղավ տերտեր, խեծավ ջորին. էկավ էդ դատավորի քաղաք պառավում տուն, ղոնախ էղավ:

Էդ գիշեր, Աստըծու խրամանքով, էդ պառավին մեկ կով կէղի, էն կով կը ծնի. խորթիկ կուգյա էդ ջորու տակ. կը մնա, կը լուսնա:

- Պառա՛վ, - կասա տերտեր, - իմ ջորին քաշա դուս, ես էրթամ:

Որ կը քաշա դուռ, խորթիկ պրպըրալին կնկի ջորու էտև: Պառավ կասա. - Տերտե՛ր, յաման, քու բաղդն եմ ընկե, էդի իմ խորթիկն ա:

Տերտեր կասա. - Քու խորթիկ էղներ, քու կովու տակ կէղներ, հորին գիգեր կընկներ իմ ջորու տակ, էդի իմ ջորուն ա:

- Տերտեր, - կասա, - ես զոռով չըմ կրնա վըր քե. մեր քաղքի մեջ լավ դատավոր կա, էրթանք էնի մեր շարիաթ էնա:

Էլան գեացին մըտ դատավոր, պառավ ուր գանգատ էնեց:

- Ես ենք, մեկ կով. տերտեր իմ տուն ղոնախ էր, գիշեր իմ կով ծներ, խորթիկ ընկեր ջորու էտև, դու ի՞նչ կասես:

Ասաց. - Կանի, տերտերոջ մոտեն լե խարցում:

Ասաց. - Ո՞ւմն ա:

Ասաց. - Խորթիկն իմն. իմ չէղներ հորի՞ն կընկեր իմ ջորու էտև:

- Տերտեր, - ասաց, - խորթիկ քուն ա, չէ՞ պառվուն:

Ասաց. - Ի՛մն ա:

Ասաց. - Տերտե՛ր, կանի քե բանմ ասեմ. իմ խեր էլավ գնաց ծովու ափ. արտ մը գյա՛ռի ցանեց, էկավ տուն. ամիսմ մնաց, գնաց տեսավ գյա՛ռին կանչըցե, չորս մատ էլեր էր, ամիս մը մնաց, գնաց տեսավ կրթեր էր: Ամիս մը լե մնաց, գնաց տեսավ որ ծովու ձկներ էլած, էդ գյա՛ռին կերած են: Տերտե՛ր, - ասաց, - էս ասած խոսքն սո՞ւթ ա, չէ՞ օղորթ ա:

Ասաց. - Սութ ա:

Ասաց. - Որ իմ սութ ա, քունն էլ սութ ա:

Ասու խրամանքով տերտեր էդա տեղ խաչակնքեց, դատավոր լուսավորցավ. տեսավ էն տերտերն էլ Գաբրիել խրեշտակն էր, խամբարծավ: Ասաց. - Պառա՛վ, էս քու խորթիկ:

Պառավ ուր խորթիկ առավ, գնաց:

Դատավորի աչքեր որ լուսավորցավ, էս խետ ինչ էնեց, բերեց փերտեմ կախեց ուր առեջ ու գանգտվորին:

Օր մկա լե մացեր ա մըջ Օսմանցվի շարիաթին: